



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ukiplaf

341

2004

Սերմեր

341

41

ԱՅՐԻ ՄԱՅՐՆ

ՈՒ



ՄԲԵՄՕՐ ՈՐԳԵԱԿԸ



ԳՐԵՑ

Հ. ԱՆՐՈՎԲԷ ՏԵՐՎԻՇԵԱՆ

ՈՒՅՆ ՄԻԹ.



1871



ՎԵՆԵԱ

ՄԻԹԱՐԵԱՆՑ ՏՊԵՐԱՆԸ

1871

278

4977

4980 4980

4980 4980

4980 4980

4980 4980



4874
41

341-2004

1. 341



Մ Ա Ր Ք

Դուք որ մայրենի սիրոյն սաստկութեան եւ քաղցր որդեկի մը կորրատեան փորձն էք առեր, եկէք մօրս, այրի մօրս աղետից պատմութիւնն եկէք մարք դուք լսեցէք: Խարտեաշ զանգրագեղ մանուկ մըն էր զաւակս, վարդ այտերով, աչերն ալ ծաւի՛ իր նմաններուն մէջ աննման էր բնութեամբ որդեակս, որդեակս միամօր: Ըն որ մանկութեան սիրելի հրապոյրներէն մէկն է, անմեղութիւնն ալ իր անջնջ կնիքը զակկիս գրոշմեր էր ճակտին: Ըստու ծիրանի արշալուսին հետ կոյս զուարթութիւնն ալ իր երեսին վրայ կը ծագէր. վառ վառ ալ աչկունքն ո՞վ չէր ըսեր որ մըտացն աշխուժին մէյ մէկ արեգակունքը չէին . . . : Ըյսպէս տասնուհինգ ծաղկապսակ զարուն՝ զակկիս չորս դին վարդ ու շուշան ցաննեց. բայց ո՛հ գիտէ՞ր մէկն արդեւք որ այրի մօրս ան յուսալից տղան յանկարծ գար անգութ մահն ու յափըտակէր իզմէ: Արդ մըն էր եւ վարդէն աւելի չապրեցաւ: Գիտեմ՝ գիտեմ սուգ առին ծաղեկներն ամէն որդեկիս վրայ որ իրենց պէս գեղեցիկ էր: Աեանքը կարծես զանիկայ չսիրեց կամ ինք կենաց տառապանքը գուշակեց. գնաց Երկնից դրախտը՝ դաուն ցաւոց մէջ թողով հոս զիս: Եկէք ուրեմն զուարթ ծաղկունք անոր խոնարհ բըլրակին չորս դին թողմեցէք ինկէք: Պատմեմ

Թէ ինչպէս նմանեցաք զուք անոր. հառաչանացս
ունկնդիր ու ցաւոցս ցաւակից եղէք. իսկ զու
քնարդ դողդոջուն ձայնս զօրացուր.

Եկէք լացէք պերճ ծաղկունք.
Բայց չեմ՝ ձեզի չեմ՝ ըսեր
Գունատ աշնան ծաղիկներ,
Դուք հիւսիսի ցուրտ հողմոց
Եւար ինկաք հիւթէ զուրկ.
Երբ ձիւներու պետութեան
Լեռն ու հովիտ խոնարհին.
Կամ երբ թագով եղեման
Չեր գազաթունք զարդարուած՝
Չէք դիմանար, թօթափէք
Ծաղիկ, տերեւ, գոյն ու գեղ:
Ընցնող դարձող թէ մարգերն
Սփռած ձեզմով որ տեսնէ,
Օրհաս բնութեան ցաւակից
Ինծայէ դառն իր կսկիծ.
Դուք ալ տրտում, յուսահատ,
Կիսով գետին խոնարհած,
Գոհ սրտիւ միշտ կը սպասէք
Հոն ձեան քողովն ըսպիտակ
Ծածկիլ մարդկան աչերէն.
Բնութեան դրախտին ծաղկաւետ
Յետին տրխուր զարդն էք զուք:
Չեզն ողբերս են ծաղկունք,
Ծաղկած բնութեան լուրջ դատերք
Սրտիս մրմունջ սիւք հողմոց
Համնի ձեզի թեւն յեցած:
Պարարտ երկրէ սնանելով,
Կանաչ փափուկ խոտի վրայ,
Հեզիկ սահող առուաց քով,
Ընոյշ բուրում սփռէիք՝
Լերանց, հովտաց, անտառաց:

Եմէն առտու քաղցրիկ ցօղ
Չովովթիւն էր ձեր ծարին.
Ընով գոյնգոյն հագուստնիդ
Չինջ մարգարտօք զարդարուէր.
Երբ երկիրն որ զարթնրով
Պսակն իր ծաղիկ բողորած՝
Երկնից աստեղ բոց աչքին
Հարս էր կարծես երեւար:
Եյսպէս ամէն վարդաման
Երշաղցս ձեզ ողջունէր.
Եյսպէս արեւն իր վերջին
Բարեւ տալուն գտնէր ձեզ,
Երբ սրդոխն որ խաղաղիկ
Մարդաց վրայէն թռչելով՝
Չեր շունչն անոյշ թեւն առած
Հեռուն չորս դի տարածէր:
Լացէք որդեակս պերճ գարնան
Գունեան գունով ծաղկունք զուք
Սիրուն մանուկս ո՛հ. լացէք:
Եյսպէս անցնէր եւ անցնի
Եյն ցանկալի ձեր դարուն:
Բայց ամէն բան չէ՞ յողգողդ.
Բնութեան բարին չէ հաստատ.
Յանկարծ ան որ յօրինեց
Չե՞ խանդարեր ալ երբեմն:
Չեր ալ վեճակն ես ողբամ՝
Չաւկիս նրման որ եղաւ:
Հանգիստ առտու մըն էր ան,
Երկնից հայլին շողացր ջինջ,
Խոտերն վէտ վէտ գդչէին.
Կարծես արեւն նախանձած՝
Ծածկեց երեսն ամպերով.
Մարսուռ պատեց դեռ մատաղ
Բնութեան մարմինն ան փափուկ.
Երեսն անոր ծաղկազեղ

Հնչովն հիւսիս փրչեց խիստ:
 Ծաղիկ բողբոջ ու տերեւ
 Ինկան թոռմած գունատած.
 Իրենց մատաղ նոր հասակն
 Լացին ողբով դառնապէս.
 Հարսունք դաշտաց զարդերնէդ
 Ե՛յսպէս շուտով մերկացար,
 Լացաւ երկիրն ալ ձեր մայրն
 Իր դստերաց անգուլթ մահն.
 Իսկ վարդ, շուշան, մանուշակ
 Յանկարծ այսպէս թոռմեցաք:
 Եկան հովեր ձեր խամրած
 Տերեւն առին ու տարին
 Եշնանային տերեւոց
 Գունատ խմբին խառնեցին

Եյսպէս որդեակս ալ մեռաւ, ո՛հ. թոռմեցաւ
 ձեզի պէս: Եսկէ ետեւ քանի՛ գարուն ողբան պի-
 տի իր վաղանցուկ մանկութիւնը: Ինչպէս սիրուն
 ծաղկած էր, գոյնն ու գեղն ալ սքանչելի. բայց ա-
 մէն բան մէկէն կորսընցուց, սիրտս այրեց տոչո-
 բեց: Ծաղիկներն ամէն ձեան տակ թաղուած է-
 ին ան ատեն. որդեակս միայն գունագեղ կը շո-
 դար. յանկարծ տխուր նշաններ դիմացը պայծառ
 գոյնը նսեմացուցին. բանի տեղ չդրուեցան. առոյգ
 հասակն ամէն կասկած չէր փարատեր. սակայն
 տակաւ նիհարնալու վրայ էր. ձայնը մարեցաւ . . .
 Լացիր՝ տխրակ որ քու լսելեացդ ալ քաղցրաբար-
 բառ էր: Հանգչելու գնաց, բայց յախտենական
 հանգստեան հրաւեր մըն է եղեր: Թոռմեցաւ . . .
 սուգ առին գալու գարնան ծաղիկներն, երբ մէ-
 ջերնին չտեսան ծաղկած ատեննին, տրտմութեան
 գորովով իրարու պատմեցին, նոյն տարին երբին
 երբին գուններով չզարդարուեցան. առտուններն ի-
 ջած ցօղն արտասուաց կաթիլներով զուարթ կա-

նաչ խոտերն ուռղեց: Եյսպէս լացին ծաղիկներ
 ծաղիկ որդեակս. ստուգիւ մանկանց կեանքը ծա-
 ղիկ մըն է. թոռմեցաւ, քանի՛ ուրիշ ծաղիկներ
 վրան թոռմեցան:

Երբ գարունն այսպէս շուտով անցաւ. ձմեռն
 այսչափ անգուլթ երբ երեւցաւ. որդեկիս գարնան
 վրայ յանկարծ հասան մահուան ձմերուկը: Գե-
 ղեցիկ դէմքը նկատելու ատենս աչքէս անոր կեն-
 դանի աչերն յափշտակեց. վարդագոյն լոյս երեսը
 գունատեցաւ, վարդերն ալ մէկտեղ թոռմեցան
 մէկէն. անշարժ մնացին շթունքը, բերանն ալ
 ո՛հ. ծաղկանց բուրումը շնչելէն դադրած էր: Ես
 ալ կենդանի մեռայ, մահ մըն եմ սրտիւ. ո՛ր է
 սէրս, ան էր կեանքս իմին: Հատ շուտով դեռ
 մատաղատունկ ցրտակէզ եղաւ, ես չոր ցամաք
 ոստերովս ծլիմ ծաղկիմ: Չինայեց երկինք, ին-
 ծի չինայեց կենացս խնայելով: Յաւազին են օ-
 բերս որ ծնաւ մահն ինծի աս կենաց աշխարհքիս
 մէջ: Յաւ ցաւ, դուն մայր կենաց մահկանացուաց
 քեզմով ծնայ մանուկս, քեզմով կորսընցուցի:

Գարունը կուգայ կ'անցնի. աշունը գեղեցկու-
 թիւնը տգեղութեան կը փոխէ. բայց ցաւոյ չքու-
 լար, դարձեալ կու գայ: Երթալու ատեն կրկին
 տեսութեան հրաժեշտով կը բաժնուի. եթէ ա՛յ
 բեւմուտք կը յափշտակէ, արեւելք մէյ մըն ալ կը
 պարզեւէ. եթէ ցուրտ հովերն անոր կեանքէ խ-
 նալը գուժեն, քաղցր զեփիւռները միւսանգամ
 կենդանանալուն աւետիսը կը բերեն: Բայց որդե-
 կիս գարունը մէյ մըն որ անցաւ ալ չի դառնար
 օդին մէջ տխուր ձայն մըն էր անոր մեռնելուն
 բօթը տարածեց, սակայն ո՛վ եւ երբ եւ ո՛ր վե-
 րբստին փթթիլը պիտի նօթձէ: Ա՛ էս հիւսիս սա-
 ռոյց շնչովն որդւոյս մեղմ ու փափուկ շունչն ար-
 գելեց. գարնանաբեր սղոխները զանիկայ կենաց
 կուէլ չկրցան: Ծով մըն են աչկունքս արտա-

տուաց անսպառ. լաց լացիր, մայր, լացիր միամօր
որդիդ:

Նմանեցաւ որդեակս ան ծաղկանց որ իրենց
սերմը չթողուցած կը թռումին կ'իյնան, երբ իրենց
ընկերներն ատենը գալուն սերնդեան քաղցր յու-
սովը հող կ'իջնեն: Ծաղկաբուխ եղանակին՝ ա-
նոնց դատերքը դարձեալ կը ծաղկին դաշտերու
վրայ ան նոյն տեղը ուր իրենց մարքը թարշամե-
ցան. այսպէս կը խամբի շուշան, այսպէս վարդը,
մանուշակն ալ այսպէս: Բայց շուշան մանուկս
վարդ դիմացը գեղը մէկէն կորսնցուց, զուրկ
յուսէ զանիկայ մէջ մըն ալ զգենլու: Ինք ցամքե-
լուն, ծաղկունք մարգերէն աներեւոյթ եղած էին
արդէն, սակայն վարդահեր շուշանապսակ գա-
րունը մօտիկցեր էր. խեղճ մանուկս անոնց շքեղ
գունազեղ պսակովը չկրցաւ գանգուր մագերը բո-
լորել. ունեցած յոյսերուս ծաղկիները վրան թա-
ռամեցան եւ անոնցմով զիս պսակեց: Քանի որ
կեանք ունիմ, անձինջ յիշատակաւ միտքս է ինք.
քանի հեղ որ վարդ առնում, արտասուքս զանոնք
ոռոզէն որ մնան անթարշամ, որդեկիս վարդա-
զեղ դէմքը դարձեալ ծաղկեցընեն: Ա՛հ, որդեակս
սիրելի որդեակս, մայրդ գունակ գունակ ծաղկե-
ներով շերիմդ զարգարած է... եւ դուն թռումե-
ցա՛ր...:

Քանի անգամ որ նորէն նորէն ծաղկիք, ո՛վ
ծաղկունք, յիշեցէք որդեակս. քանի հեղ որ ես
ձեզ տեսնեմ, ինք միշտ միտքս կու գայ: Եմէն
գարուն աշուն մըն է, վասնզի ձեր գեղեցիկ գոյ-
ներուն վրայ որդեկիս գունատած դէմքը կը նըշ-
մարեմ: Բայց ձեզմէ մէկը թռումս՝ որ տեսնեմ,
զուր տեղ արտասուօքս զանիկայ կենդանացընե-
լու կը ջանամ. դառնութեամբ լի արցունքս քաղ-
ցրաբոյր ծաղկանց չեն կրնար կեանք պարգեւել.
միայն որդեկիս յիշատակը մտքիս մէջ կը կենդա-

նանայ. աս աղետալի անմահութիւնը ցաւերս ա-
նոր շնորհեցին՝ քանի որ կեանք ունիմ ես: Երբ
որ ուռին իր շերմին քով ինծի ալ հովանի ըլլայ,
ալ անկէ ետեւ Երկնից դրախտն անոր մանկու-
թեան անթառամ ծաղիկը նկատելու կ'երթամ:
Հոն մեղմ սղոխները, հոն հեզիկ սահող առունե-
րը անմահութեան ծառին վերէն վարէն կը թռու-
չին կը սլանան. հոն հիւսիս չի փչեր, յաւիտենա-
կան գարուն կենաց ծաղիկն անվթար անեղձ կը
պահէ:

Բ.

Շքեղ լոյս, աչկունքս մթնցան, ալ չեմ քեզ
տեսներ, աչքիս լոյսը շիջաւ: Եմէն առտու դուն
կու գայիր զեղուէիր անոր պարկեշտ աչերը. նոյն
օրն ալ եկար, բայց փակուած գտար: Հուր բերր
չէին շողար, խիտ խիտ մացառածեւ արտեւա-
նունքն ինկած մարած էին...: Ե՛րեւ ամէն այ-
գուն որդեկիս դիմացը պայծառ հայելոյն վրայ
ինչ գեղեցիկ կը փայլէիր. բայց այսօր լուռ մունջ
կեցեր է սենեակը, սպիտակ պատերը միայն դի-
շերուան նսեմ քողէն մերկացար. ինք հողի տակ
հանգչած է՝ նշոյներէդ անմատոյց: Բուսցուր ա-
նոր ցածուն բլրակին վրայ շքեղ բայց սգոյ ծա-
ղիկներ. թող կակաչներն հոն աճին տրտմազին:
Ծածկէ նա եւ երբեմն դէմքդ անկէ, սգոյ վայր է
հոն: Ե՛նոր համար ալ չես ծագիր զուարթ, թէ-
պէտ եւ շատ քիչ ատեն ծագեցար: Դուն քանի
մանկանց բոց աչաց մթագնիլը տեսար՝ առանց
բոցավառ վարսիցդ եւ ոչ մէկ մազը նսեմանալու:
Դուն միշտ երիտասարդ մնալով տկար մահկա-
նացուացս նախանձը շարժեցիր. բայց դուն ալ

երբեմն պիտի չծերանան: Ի՛նչ, մնեղեաց թագաւորութիւնն աւերակ դառնալէն ետեւ՝ դուն աւոր փլատակաց վրայէն անմահութեանդ յաղթական բոցանիւ հրեղէն կառքը պիտի արշաւեցրնես: Երկնաւոր բարձրութենէդ գահաւիժելով ճառագայթներդ համաշխարհական փողոյն հետ պիտի չխառնուին . . . : Բայց դուն մեր հոգւոյն մշտնջենաւոր կենդանութեան վկայ ես. ինչ ցաւ զքեզ տեսնելուն չիփարատիր մահկանացւոյն ո՛հ, սրտէն. մոռցայ զակիս կորուստը քենէ պայծառ զինք տեսնելով. օրտամախառն ցնծութեամբ հոսեն արտասունքս

Դարձուր լոյս աչերն ան բոց նայուածքովդ.
 Մէյ մը դարձիր մօրս նայէ գունատ դէմքն:
 Քեզ նշմարելով՝ մարմնոյս խաւարին
 Բանտէն ազատած, երկնից անմատոյց
 Շրջիմ՝ գաւառներն՝ խեղճ մահկանացուաց:
 Եմպեր վարդազոյն ոտքիս տակ սիւռած,
 Շողոզոյան չորս դիս բիւր արեգակունք.
 Բոցեղէն նետեր աչերն խոցոտեն,
 Ե՛ւ չեմ՝ զիմանար, կոյրցայ, չեմ՝ տեսներ . . .
 Երբեմն արցունքի գետերէն ցամքած,
 Օրկուելու աչկունքս մօտ էին լուսէ:
 Չիմայ լուսեղէն հեղեղներ յորդեն,
 Տկար լոյսն առնուն հիւծած աչերուս.
 Հոս չէ բնակարան մահացուաց եղեր :
 Ո՞վ է մանուկն ան սուրբ լուսով պատած.
 Հողածնաց երկրին է գաւակն արդեւք.
 Են ինչ շողողուն կրակ ու բոց աչեր.
 Հուր հեր գլխուն վրայ կայծեր արձակէ,
 Որ ծածկէ գեղովն արեւու ճաճանջն:
 Երկնից էիր միշտ, թէ թողլով երկիրն
 Խոյսացար յանկարծ ան լոյս ապարանքն:
 Չէիր երկրածին մեզի նրման հէք,

Որ ցաւով աչուիդ բացիր փակեցիր.
 Գիտեմ՝ որդիս ես, որ անմեղութիւնդ
 Երաւ խաւարէն տարաւ ան գաւառն.
 Ուր մութ չունի մուտ անքուն աչերու.
 Մեղաւոր աչկունքս չեն արժանի չեն
 Երկնաւոր տեսիլս միշտ վայելելու
 Եմէն բան յանկարծ ո՛հ, աներեւոյթ
 Բրին կարծես թէ ամպեր տխրութեան . . . :

Են մխիթարիչ քաղցր տեսիլն սը չ'երեւար,
 զիշերուան բնական սուզը՝ խորհրդներս թախճու
 թեամբ դարձեալ քողարկեց: Ի՛նչպէս ան լուսաւոր
 աշխարհէն խաւարարգել բանտս դատապարտուեցայ
 միւսանգամ: Ե՛րբ պիտի ան վայրկեանը
 դայ, որ անսահման երկնից բարձրութեան սլանալով
 հոգիս՝ որդւոյս աչաց յաւիտենական գեղեցկութիւնը
 կարենայ նկատել: Խաւարակուլ լուսոյ քաղաքին
 բնակիչ եղեր է ինք, ուր անրստեղծ
 Լոյսը կաւեղէն աչաց անսպառ պայծառութիւնն է:
 Ես անկենդան անլոյս աչուիս դարձրնեմ՝
 ստէպ երկնազուարճ օդասփիւռ կամարին,
 որ ցաւերս սփոփուին՝ ապազայ երանութեանս
 քաղցր յուսովը:



Գ.

Ե՛ստեղք, դուք դեռ չէք խաւարած . . . երկու
 փայլ փայլ աստղկունք մթազնեցան ո՛հ, որդեկիս:
 Մխիթարակից արտամութեանս դուք էք. գիշերուան
 մարգարտազարդ երկինքը, ցորեկուան ամէն
 ցաւոց մոռացութիւնն է: — Բայց աս ողբոց մէջ
 ինչ ահազին զգածում մըն է սիրտս պատեց.
 Ինչ վեհութիւն է երկնից կամարին վրայ: Դուք

յաւիտենական լուսով շողացող երկնաւոր անդամանդք, դուք որ եթերէն վեր պսակ բոլորած էք, որդեկիս գլուխը հիմայ չէք զարդարեր: Չեզմէ վեր բիւրաւորք ալ կան, որ տկար աչացս չեն երեւար. գուցէ անոնց մէջն է որդեակս ալ, անոնց հետ Բարձրելոյն աթուոյն քով: Աստեղք, վիճակս, իմ վիճակս ողբալի, աստեղք դուք լացէք: Աս մահկանացուաց երկրէն ողբերգու մօրս հեծեծանաց հիմակ ալ դուք ունկնդիր եղէք. որ գիշերուան հանդարտութեան մէջ սգաւոր քնարին ձայնիւր զօրացած ձեզի կը գոչէ.

Արտասուալից աչկունքս ուղղած միմնջով,
 Ամէն գիշեր ձեզի նայիմ տրտմագին.
 Միշտ նորանոր տեսնեմ երկինք հազար աստղ,
 Բայց որդեկիս չի շողար ջինջ ճաճանչն հոն:
 Կամարն ելաւ արդեւք երկնից խորագոյն,
 Ուր չեն արծիւ ականողիք ալ զօրեր:
 Ար բարձր ամպեր կամ խոր ծովեր զինք առին
 Աներեւոյթ ըրին աչաց այրի մօրս:
 Քողն աստղալից դէմքն էր առեր երկին ջինջ,
 Քունն անոյշ մեղմ սահէր յոգնած աչերէն,
 Չինախաղաղ հանդէին դաշտ, լեր ու ձոր.
 Իսկ իմ աչեր արթուն հողած հսկէին . . . :
 Տժգունեցան ան լուսաւոր շողաւոր
 Մարդարիտներն երկնից ճակտին պաղպաջուն
 Երբ որդեկիս բոցաճաճանչ լուրջ բբերն՝
 Խոցոտեցան խաւարի մուխ նետերէն:
 Ան օրէն վեր առին ամպեր թախծութեան
 Աչքէս կամարն յուսոյ երկնից ծածկեցին:
 Յառաջ ձեր տեսքն ուրախութիւն էր սրտիս,
 Երբ որ զմայլած գեղովն անոր մանկութեան՝
 Չեր Արարչին բիւր գոհութիւն խաւրէի.
 Երանութեանս անչափ փութով հասաւ վերջ:
 Ամէն գիշեր տրտում տխուր նայիմ արդ,

Մեղմ հեծեծանքս մինչեւ ձեզի հասցընեմ.
 Դուք խուլ դիտէք, բայց Հաստիչնիզ որ հսկէ՝
 Ողբոց այրուոյս է բարերար ունկնդիր:
 Յուսով՝ կենացս յետին օրերն անցընեմ,
 Որ դառնութեան բաժակն ինձի արբուցին:
 Ան բիւրաւոր պերճ ազամանդ լուսերէն
 Երկուն՝ մանկանս աչեր են շող մարդարիտ:
 Խաւարարգել աչքիս վառ վառ կը վառի,
 Սիրտս ալ վառէ իր տեսութեան հուր անձկով:
 Ողորմէ մօրս լուսաւորիչդ աստեղաց,
 Դուն մայրենի գանգատանացս ներէ սհ. . . . :

Այսպէս խայտակն մանուկը գիշեր էր երբ աչուները փակեց. բայց դեռ արեւը զարթուցանելու չեկած՝ պայծառագոյն արեգական նշոյններէն սկսաւ լուսաւորուիլ: Երկինք ամպեղէն քող մըն երեսն առաւ, կարծես աստեղք ան սոյ տեսիլը տեսնել չուզեցին: Քանի անգամ փայլ փայլ փողփողած ատեննին, ինքն ալ երկու բոց բոց աչկունքն անոնց ուղղած փող փող կը շողար: Բայց նոյն գիշերն ամէնն ալ աներեւոյթ եղան, եւ անկէ ետեւ շատ գիշերներ չերեցան: Ամօթղած կուսից պէս իրենց սիրոյ արցունքը թուխ թուխ ամպոց սրահակէն կաթիլ կաթիլ երկիր հոսեցին. թուչեցին ան անձուկ վայրը՝ ուր որդեկիս աճիւնը պիտի հանդէր. խոստացան որ անոր վրայ միշտ հսկեն. պայծառ գիշերները կ'իջնեն անոր շիրմին չորս դին պսակ կը բոլորեն: Արդեակս ալ աստղ մըն էր, բայց շիջաւ. դուք աստեղք մանկանս պատկերն էք: Գիտէի որ ամէն լոյս կը մարի, դուք ալ ատեն մը պիտի մարիք, սակայն այսչափ փութով: Աստեղք, տակաւին փայլիք, ցաւերս մինչեւ ցե՛րք նորոգէք: Տխուր նայուածքով անկէ ետեւ նայիք միշտ ինձի. կամ գուցէ ես ձեր վրայ տխրութիւն կը նշմարեմ: Արդեւք դուք ալ

վախճաննիդ կը մտածէք. դարեր ապրեցաք, այնչափ մըն ալ դեռ կեանք ունիք թերեւս եւ հիմակուրնէ՞ սրտերնիդ դող կ'ելլէ: Չեր անկման ատեն վրանիդ ցաւող պիտի չըլլայ, թէպէտ եւ երկնից շքեղ զարդերն էք. բայց զաւկիս իյնալ թողմիլը որ տենտողը ցաւակցութեան չչարժեց. . . : Քանի մայրեր ինձի պէս միայն միայնուկ նստած սցապէս ձեր առջեւ իրենց կսկիծն սփոփած են. ձեր մխիթարութիւնը լսելեաց չի խօսիր, հապա աչքի ու սրտի: Ե՛յսպէս, սստեղք, վշտերս քաղցրացուցիք, ո՛հ. թող թեթեւայ սիրտս ասկէ ետեւ ան ամէն հեղ որ ձեր հուր հուր աչկունքն՝ որ որդեկիսն են, մթազգած աչերուս լուռ լուռ կը փայլին սգով: Եստղ մըն էր ինք ալ երկրաւոր, եղաւ հիմայ ձեզի նման երկնաւոր աստղ մը:



Գ.

Վաստակաբեկ անդամներուն հրաւեր կուտայ քունը՝ երբ գիշերը թաւիշ քողն աչաց վրայ կը ձգէ: Ար հանգչի երիտասարդին վառվռուն երեւակայութենէ պարտասած միտքը. դողդոջուն ծերունւոյն թերաբամ աչքը բռնի կը փակուի՝ սիրտը խռոված, գուցէ լուսաճաճանչ Եստեղ առաւօտեան կենդանաբեր ճառագայթից արժանի չըլլար. երբ մատաղահասակ ծաղկադէմ մանուկը բիւրապատիկ ամաց ակնկալութեան բարձին վրայ թեթեւ գլուխը կը հանգչեցընէ, որ տարեաց հոգերուն ծանրութիւնը կրելու զօրութիւն զգենու: Իսկ դուն ո՞վ ես անմահ ճիւղ, որ ամէն աչք գոցուելէն ետքը, անթիւ անհամար աշուրներովդ լայնածաւալ տիեզերքը կը հետազօտես: Քանիներուն սիրտը կեղծաւոր ժպիտդ թունաւորեց.

որչափներ բնութեան հեշտական հանգիստն առած ատեննին՝ ապրելէն դադրեցան: Գոնէ՞ հարիւրամեայ տառապանաց տակ ճնշուած ալեւորը բեռէն ազատէիր. թող տայիր որ անփորձ մանուկը տղայութեան անմեղ զբօսանքն ընէր: Ա՛ր է մտիկ ընող, ձայն չկայ, քուն է բոլոր շնչաւոր բնութիւնը: Քուն քուն, դուն կենաց պահապան ես, ինչպէս որդեկիս սուրբ կեանքն յափշտակեցիր: Դուք մանկանց քնոյն անոյշ ժամեր, լացէք զաւկիս մահ քունը. վերջին իրիկունը ձեր գոգն աշուին փակեց, բայց

Կանչեմ որոր հեղ մրմնջով,
 Ար որդիս քունն անոյշ ննջէ.
 Օով է գիշերն հով են օգեր,
 Երկին երկիր առնուն հանգիստ:
 Սա վարսաւոր հովանւոյն տակ,
 Հանգչէ զաւակս, հանգչէ դարեր.
 Քեզ խստաշունչ անգութ հովեր
 Չեն վրդովեր հանգստենէդ
 Մահկանացուաց թող Օարթուցին՝
 Եմէն այգուն ինայէ քեզի.
 Լուսոյ աղմուկն օթեվանիդ
 Դուռն հասնելով քունդ չարգելէ:
 Երբ իրիկուան լուռ ըստուերներ
 Իջնեն բնութեան գերեզմանին,
 Հեռուն խաղաղ հովիտներէն՝
 Բերեն ծաղկանց անոյշ բուրումն
 Իրենց թեւերն հեղեկ հովեր,
 Ար քունդ երկար քաղցրացընեն.
 Գլխուդ վրայէն մեղմ սահելով
 Արոր սուլեն հեծեծանօք
 Քնացիր զաւակս, քունդ անոյշ միշտ . . . :
 Բայց մայրենի թող չի տար գութս,
 Ար չելլէ սիրտս աս հրաժեշտին . —

Երբ յուսալից մանկանս որրոցն
 Ուրախութեամբ տատանէի.
 Ինչ քաղցր յոյսեր ես հիւսէի,
 Որոնք երբեմն երանութեան
 Պիտի գլխուս կապէին թագ . . . :
 Իսկ դուն անդին յեղ յեղունկ Ռախտ,
 Մանէիր գաղտ թշուառութեանս
 Ընդերեւոյթ անլոյծ շղթան:
 Երջանկութիւնս դեռ կեանք չառած՝
 Ինկաւ այսպէս ո՛հ. ողէսպատ:
 Բլլայ հեռու քուն քաղցր աչուէս,
 Ընքուն աչուէս ասկէց ետեւ.
 Թող սիրելի որդեակս ննջէ՝
 Ընզաւակած այրի մօրս տեղ.
 Հերիք մայրդ, մայրդ հերիք ննջեց
 Ըննինջ հիմակ ալ հսկէ միշտ,
 Մինչեւ գրլուխս ցաւոց բարձին
 Յեցած՝ աչերս ուրախութեամբ
 Փակուին՝ յուսով լուրջ տեսնելու
 Հոյլ ոսկեճոյլ աստեղաց մէջ
 Երկու փող փող փայլող աչկունքդ:

Ըմէն քուն մտնելուս՝ կը սպասեմ ան զիշե-
 րուան, որ քաղցր հանգստենէս զիս չարթնցընէ.
 բայց արտեւանանցս վրայ նիրհ չի հանգչեր: Մի-
 այն միայնուկ նստած եմ միշտ՝ հոգերս ընկեր ա-
 ռած ինձի. զուր տեղ յոգնած աչուիս հանգիստ
 կը խնդրեն զիշերուան հանդարտութենէն. սրտիս
 անհնարին տազնապը քուն մըն ալ աղուեսաբուն
 թող չի տար ննջեմ: Ինչպէս ամեհի արեաց մատ-
 նուած զաղփաղփուն լաստափայտ մը անդադար
 նաւահանգիստ կը հառաչէ, ասանկ ժամանակի
 արեկոճ ուկիանոսին խռովութեանց խաղալիկ ե-
 ղած սրտիս տկար նաւակովը՝ անքուն աչերս ա-
 ռաջնորդ աստեղաց ուղղած՝ յաւիտենական խա-
 ղաղութեան եզերքը կը դիմեմ:

Ե.

Տրամագին են օրերս, ուրախութեանս պատ-
 կերն աչքէս աներեւոյթ եղաւ: Ըմէն տեսածս
 մահ է. ո՞վ մահուան վրայ ուրախութեան նշան
 նշմարեց երբեք: Գարունն եկաւ, անտառն ելայ.
 ամէն կողմ՝ ծառ ծաղիկ, բնութիւնը խնաման
 մէջ էր, սիրտս միայն անշէն անապատ մըն էր:
 Ըռջեւէս տերեւիկ մըն էր յանկարծ թօթափե-
 ցաւ ինկաւ գունատ դեղինցած: Վարելն էր չյի-
 շել որդեակս նոյն վայրկենին. ինք ալ այսպէս ին-
 կաւ: Մեղմ հով ալ չէր փչեր, ուստի՞ ան փոքրիկ
 տերեւը տժգոյն գունաթափ հողն իջաւ, որ վար-
 սագեղ ծառին զազաթն էր հանգչեր. պատճառը
 զաղտնի ալ չըլլայ, միշտ արգահատութեան ար-
 ժանի է դէպքը: Ո՛հ. աղնիւ որդեակս. ինչպէս
 կենաց ծառին կատարէն յանկարծակի փրթար:
 Գերեզմանիդ քով ուռի մը տնկեցի եւ արտտուն-
 քովս աճեցուցի. անոր ոստերն ալ քանի՞ հեղ
 վրաղ թոռմեցան բայց դարձեալ կենդանացան.
 դուն միշտ թարշամանձ մնաս . . . :

Սա հովանաւոր ուռենւոյն տակ՝ որչափ ան-
 գամ արցունքով սրտիս ծանրութիւնը թեթեւ-
 ցուցի, որ տեսքովս իսկ ողբոցս ողբակից երբ որ
 խնդրեմ պատրաստ է միշտ՝ խոնարհահակ ու-
 տերն որդւոյս գերեզմանին ծուած: Հոս լոյս մըն
 ալ տնկեցի՝ միակ մսիթարանքս: Երբ սիւք փչե-
 լու ատեն՝ ուռիին ոստերէն լապտերն հանգիստը
 կորսնցընէ, թող անոր անմահ հոգին միտքս գայ:
 Վառ մնայ միշտ, գոնէ քանի որ կենդանի եմ ես.
 մեռնելէս ետեւ՝ հաւատքն անշուշտ բարեպաշտ
 ձեռքի մը կայծ մը տարով՝ կանթեղ մըն ալ ինձի
 կը վառէ, որ տեսնէ անցաւորը, կարգայ դամբա-

նազիրն ու ողբայ զմեզ: Դուն լոյս հսկես զաւկիս վրայ, ես միշտ արթուն չեմ կրնար կենալ . . . : Ենչարժ բոց մըն է, կենդանութիւն չկայ, լուծութիւնը միայն աս շքեղ ու տխուր տեսարանին հանդիսատեսն է: Ով ջահ, եթէ չըլլայիր՝ ցաւերէս ընկճած էի: Զահ . . . Հաւատք . . . Յոյս . . . Սէր . . . :

Երբ աչերն որ փակուին լուսոյ,
 Հողւոյն կենաց լուսոյն՝ ան լոյսն
 Է սուրբ պատկերն, որ արեւուն
 Թէպէտ մարին ձոյլ ճաճանչներն,
 Ինք միշտ պիտի պայծառ ցոլայ:
 Դամանակի փոթորիկներն
 Ենոր անշարժ ելող բոցին՝
 Չեն պատճառեր փոքր ալ շարժում:

Ենեզր անսահման բարձրութեան մէջ միշտ՝
 Եողջողայ յատակ, խաղաղ, անփոփոխ:

Գերեզմաննոց է բոլորտիքս, կեանք չկայ, մութն ալ մահուան պատկերն է. քաղցր ու հաշտ երկին՝ յուսոյ հայելին, սուգ հագեր է: Ղիկ չկայ, բան չեմ տեսներ, միայն ժամանակի կառքին ճեպով պացող մեղմ սօսաւիւնը կը լսեմ: Դամանակ, անցիր, անցնելիքդ շատ չէ . . . : Հոս եկայ որ զաւակս լամ. զիս՝ միայն ցաւերս նորոգելու, մանաւանդ թէ քաղցրացընելու համար, զիս միայն կանչեն հոս ամէն սուգ շնչող սղոխներ, միտքս բերեն յիշատակդ, տխուր յիշատակդ, տրտում տխուր մօրս աչքին առջեւ նկարեն, մինչեւ զքեզ զուարթ չտեսնեմ: Ով գլուխս ջուր տար եւ աչերս արտսունքի աղբիւրներ, որ չհանգչի որդեակս լայն . . . : Ինք ալ անշուշտ կու լայ. բայց չէ, արցունք ալ իրեն համար չէ: Ուրախութեան մէջ է, սակայն ցաւոց տեղն եմ ես, չեմ կրնար

անոր ցնծութեան մասնակից ըլլալ: Քանի որ մահկանացու եմ, աշխարհք եմ՝ աշխարհու եմ: Բայց զաւակս զաւակս, չէի կարծեր որ իզմէ յառաջ հոս գաս, դուն պէտք էիր նախ մօրդ սերն ողբալ: Ես կրնայի քարին ծանրութիւնը վերցընել որ տարեւոր էի, դուն տակաւին մանուկ էիր մատաղահասակ. չէիր յոգնած որ հանգչելու յօժարէիր, բայց հոս հանգստեան տեղ է: Սակայն հանգարտութիւնդ չլրգովեմ . . . : Ղիկ չե լուիր, շունչ չկայ, աս ամայութեան մէջ ինչ ահագին թնդիւն է սրտիս մէջ: Երկիր երկին տխուր, բայց ամպերէն վեր երկինք ուրախ է միշտ. երկրաւորս կ'ողբամ իզմէ բաժնուիլդ, երկնաւորք կը ցնծան զքեզ մէջերնին ընդունելուն: Կենդանութեանդ ատեն վրադ կը դողայի, հիմակ որ զքեզ կորսընցուցի՝ ինչպէս կրնամ մխիթարութիւն գտնել: Բայց որմէ պահանջեմ զքեզ. մահ, քեզմէ զաւակս կը խնդրեմ, անոր մօրն աղեխարշ սրտին ու զորմէ, այրի մօրս մէկ հատիկ յոյսն ետ դարձուր ո՛հ . . . : Չայն չկայ. երկրի՞ բողոքեմ որ զինքն առաւ ծածկեց. բայց ես ձեռքովս իրեն աւանդեցի որ պահպանէ. երկնի՞ բողոք բառնամ, սակայն ան է զաւակս ինձի պարգեւողը — լամ ու յուսով մխիթարուիմ:

Վ էմ, զաւկիս վրայ շատ մի ծանրանար. վէմ, դուն կենաց կափարիչն ես, բայց որդեակս տակաւին մանուկ էր, դուն ծերերուն ծիւրեալ զէմքը կը ծածկես. բայց վէմ, դուն անմահ կենաց ալ կնիքն ես. ամէն անցաւորաց լուռ կը քարոզես՝ որ բազմած հողոյդ տակ հանգչողն օր մը զքեզ վրայէն պիտի նետէ . . . : Վ էմ, դուն ամէն մահկանացուոյն կենաց ու մահուան նկարագիրը կու տաս . . . ո՛հ. քաղցր արտսունք, հոսեցէք, դրոշմեցէք ան խօսքերը՝ զորոնք սիրտս բերնիս տուն կու տայ. վէմ վէմ, զաւկիս ալ ծնունդը, կեանքն

8
 772
 1587
 341-2001



ու մահը քանդակէ, որ ամէն անցնող դարձող
կարդայ որդեկիս ու մօրն աղէտքը: Պատմէ

Հիւրամեծար եղերաց քով,
Մօրս միամօր էի որդեակն.
Մեռայ ծաղիկ հասակիս մէջ,
Օտար երկիր իրմէն հեռու.
Հազար մահուան թափեց արտասունք.
Կանգնեց շիրիմ, տնկեց ուռի,
Ըմէն աշուն այց ելէ միշտ:

Լացիր զիս, անցաւոր

Սրբէ մօրս յորդ արտասունքն:

Օիս շատ սիրելն զինքն ըստիպեց՝
Որ ամեհի ծովուն ալեաց
Օիս մէկ հատիկ զաւակն յանձնէ . . .

Հաւատարիմ ջրերն յեցած՝

Եսպնջական ափունք հասայ.

Հոն չորս տարի սրնայ խաղաղ,

Կարծէի մահն հեռու շատ զեռ.

Լացէք մարք, ան ջերմ ջերմ

Մօրս արտասունք սրբեցէք:

Երբ դիտէի կենաց պարտէզն՝

Լուրջ մանկութեանս առոյգ ծաղիկն,

Ցուրտ հով մրն էր փրչեց յանկարծ,

Ցամաքեցայ ինկայ գետին . . . :

Լաց, մանուկ, զիս, լացիր միշտ,

Էի ես ալ քեզի պէս . . .

Տառապեալ է մայրս միայն միայնուկ,

Հառաչանօք միշտ ինձի հետ խօսի,

Խօսի լեռներէն,

Հեռու ծովերէն:

Գիտէ չեմ զառնար անցաւոր կենաց,

Բայց անմահ է կեանքս, մի մայր ալ ողբար.

Քեզ չեմ թողուցած հոգևով ու սրտիւ.

Քեզի հետ եմ միշտ, մրնամ զալըստեանդ:

Կեցիր, մանուկ անցաւոր, մանուկ մրն է վի-
մրն հովանոյն տակ ննջողը. քեզի պէս արթուն
էր զուարթուն, սակայն յանկարծ դեղեկեցաւ
ինկաւ: Գուն եկուր լացիր, եկուր ծաղիկ հասակդ
ողբա, արցունքովդ կենդանացուր: Մահ չէիր տե-
սած, տես. զնա մօրդ պատմէ, պատմէ բարեբախտ
մօրդ, զժբախտ մօրս վիճակը զնա դուն պատմէ:
Ես ալ երբեմն երջանիկ էի միամօր որդեկովս, ո՛հ,
երկայն չտեւեց. լացիր մանուկ, զնա մօրդ պատմէ
լացէք մէկտեղ իմ ու որդեկիս աղէտքը: Կարդա
արձանագիրը մէկիկ մէկիկ. ես արիւն արտա-
սուելով զանոնք ամէն տարի կը նորոգեմ. եթէ
ես մեռնիմ, դուն որդեակ եկուր հասակակցիդ
պատմութեան յիշատակն անջինջ պահէ: Թէ որ
դուն ալ մեռնիս ծաղկիդ մէջ թողմիս, կու լամ
զքեզ մօրդ հետ: Ըմէն հեղ ասկէ անցնելուդ՝
յիշէ որ օր մրն ալ ուրիշ հասակակիցներդ քու
առջեւէդ կրնան անցնիլ արտասուալից:



ՀՀ Ազգային գրադարան



NL0803021

